Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄԿՐՏԻՉ ԱՅՎԱԶՅԱՆԻ Ք. ԱՍՏԱՆԱ (ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անուն, ազգանուն.

Մկրտիչ Այվազյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ղազախստանի Հանրապետություն, ք. Աստանա, 15-20 սեպտեմբերի, 2024 թվական

4. Հրավիրող կողմը.

«Համալսարանական ծրագրավորման ֆեդերացիա» հանրապետական հասարակական ասոցիացիա

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն «Միջազգային համալսարանական ծրագրավորման մրցույթի (ICPC) աշխարհի 48-րդ եզրափակիչ» միջոցառմանը

6. Քննարկված թեմաները.

- «Tech Trek Presentation» խորագրով քննարկում,
- Արհեստական բանակության JetBrains, Kotlin, Python ծրագրերի հնարավորությունների վերաբերյալ քննարկում,
- «Շրջանավարտների զրույցներ» (Alumni Talk) խորագրով քննարկում,
- «ICPC մարտահրավեր» (ICPC Challenge) խորագրով քննարկում,
- «ICPC մարզիչների մարտահրավեր» (ICPC Challenge for Coaches) խորագրով քննարկում,
- «ICPC մարզիչների մրցանակաբաշխություն»,
- ICPC 48-րդ եզրափակիչ մրցույթ (2024 ICPC World Finals),

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում մասնակցել եմ «Միջազգային համալսարանական ծրագրավորման մրցույթի» (ICPC) աշխարհի 48-րդ եզրափակչի պաշտոնական բացման արարողությանը,

մրցույթի շրջանակներում նախատեսված «Tech Trek Presentation» խորագրով քննարկմանը, արհեստական բանակության JetBrains, Kotlin, Python ծրագրերի հնարավորությունների վերաբերյալ քննարկմանը, «Շրջանավարտների զրույցներ» (Alumni Talk), «ICPC մարտահրավեր» (ICPC Challenge), «ICPC մարզիչների մարտահրավեր» (ICPC Challenge for Coaches) խորագրերով քննարկում-միջոցառումներին, ինչպես նաև եզրափակչի պաշտոնական փակման արարողությանը: Այցի ընթացքում հանդիպում է տեղի ունեցել «ICPC հիմնադրամ»-ի նախագահ Ուիլյամ Փաուչերի հետ: Միջազգային համալսարանական ծրագրավորման մրցույթի (ICPC) աշխարհի 48-րդ եզրափակիչ» միջոցառմանը մասնակցում էին աշխարհի 140 համալսարանների ուսանողական թիմեր: Եզրափակչին մասնակցում էր նաև Երևանի պետական համալսարանի թիմը: Յուրաքանչյուր թիմում ընդգրկված էր երեք ուսանող, որոնց գործունեությունը համակարգվում էր մեկ կամ երկու մարզիչների կողմից: Մասնակիցներին հանձնարարվեց 12 խնդիր, որոնց լուծման համար թիմը ուներ 5 ժամ: Միջազգային համալսարանական ծրագրավորման մրցույթի (ICPC) աշխարհի 48-րդ եզրափակչի առաջին հորիզոնականը զբաղեցրեց Պեկինի համալսարանի թիմը, իսկ Երևանի պետական համալսարանի թիմը զբաղեցրեց 76-րդ հորիզոնականը:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի ընթացքում որոշումներ և պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում կարևորվեց առաջիկա տարիներին անցկացվելիք «Միջազգային համալսարանական ծրագրավորման մրցույթին» (ICPC) հայաստանյան բարձրագույն ուսումնական հաստատությունների ակտիվ մասնակցությանը խթանումը և մրցույթի վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը:

25 սեպտեմբերի, 2024 թվական

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՄԿՐՏԻՉ ԱՅՎԱԶՅԱՆ